


ՏՆՈՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
Ն. ՓՈՐՈՍԵԱՆ

ՆԱՄԱԿ ԿԱՐ ՈՐ ԵՒ Է ԳՈՐԾԻՒՆ
ՊԵՏՐ Ե ՈՒՂՂԵՒ ԱՊ
Խմբագր. ԱՐՇԱԼՈՅՍ Լրագրի
ԳԱԶԻՐԷ (Հասպոպոլիտ)

Rédaction du journal arménien
ARCHAEOUICE
HABANISH LE CAIRE (ÉGYPTE)



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՄԱՐ
Տարեկան, ողջ դահլիճ. 60
Վեցամսեայ » 35
ՕՏԱՐ ԵՐԿԻՄԵՐ
Տարեկան Ֆրանկ 20
Վեցամսեայ » 12

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐԻ ԿԱՆԽԻԿ Է
ԵՒ ԹՂԹԱՏԱՐԻ ԾԱԽՔԸ
Խմբագրութեան վրայ :
Խմբագրութեան ուղղուած
գրութիւնք եւ չ'են օրուր :

ՆՈՐ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆ

Մեր արտօնատէր ընկերոջ Տիար Տօք. Ա. Ս. Յակոբեանի ծանօթ հրատարման պատճառաւ, « Արշալոյս » ը հրատարակելու առթիւ 99 տարւոյ Յուլիս ամսոյն մէջ երեք ընկերաց մէջ ստորագրուած պայմանագիրը ինքնաբերաբար չ'ընկած է և երկրորդ վեցամսէի սկիզբը ամբողջ հաշիւները տեսնուելով մաքրուած են: Ուստի ամսոյս 15ն սկսեալ նոր պայմանագիր մը կ'ընուած է տպարանատէր և «Արշալոյս» ի նախկին մատակարար Տիար Ս. Կարաբնեանի և թերթի Տնօրէն-Խմբագրին միջև, որով « Արշալոյս » ըստ առաջնոյն անընդհատ պիտի շարունակուի, այս անգամ նիւթական և բարոյական ամեն պատասխանատուութիւն միայն Տնօրէն-Խմբագրին պատկանելով, որ ստանձնած է միանգամայն նախկին ընկերութեան յանձնառութիւնները գործադրել, այսինքն տարեկան վճարող բաժանորդաց թերթերը ըստ առաջնոյն զրկել մինչև լրագրական տարւոյն վերջը, որ է՝ տարւոյս յուլիս 31ը:

Հետեալքար ամեն անոնք որ «Արշալոյս» ի խմբագրութեան հետ ո՛ր և է գործով կամ խնդրոյ պատճառաւ գրաւոր թէ բերանայի յարաբերութեան մտնել ուզեն, ինչպէս նշանակուած է թերթի ճակատին, պէտք է գիտնն ուղղակի Տնօրէն-Խմբագրին, որոյ զուտ անձնական սեփականութիւնն է այժմ « Արշալոյս » թերթը, փետրուարի սկիզբէն սկսեալ:

Հարկ կը համարուի յայտարարել նաև թէ, յետ այսու « Արշալոյս » ը փոխանակ հինգշաբթի և կիրակի առաւօտները հրատարակ հանուելու, ինչպէս առկէ առաջ ծանուցած էինք մեր 99, 7 հոկտ. 21րդ թուով, ամեն չորեքշաբթի և շաբաթ օրերը պիտի հրատարակուի:

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՈՐԲԱՆԱՄԸ

Բարեգործութեան և ընկերութեան ամենաքաղցր պարտականութիւնները — որ ամենունս ալ պէտք է ըլլայ — լրացնելու նպատակաւ, կիրակի օրը դատ մը հայեր համախմբուած էին՝ եկեղեցւոյ կից մանկապարտիզի սրահին մէջ:

Վասպուրականի Որբանամ ընկերու-

թեան ընդհանուր ժողովոյ անդամներն էին, թուով վաթսուներեք, որ գումարուած էին այնտեղ՝ լսելու իրենց վարչութեան եօթնամսեայ գործառնութեանց տեղեկագիրը և համարատուութիւնը, ինչպէս նաև ընտրելու իրենց նոր վարչական մարմիններն:

Սրահէն առաջին անգամ ներս մտնողին վրայ կը մնար այն տպաւորութիւնը թէ՛ կարգապահութիւնը եւ պատկառանքը կը տիրէր հոն. և բարեսիրութեան բուռն զգացումէ առաջացած զուարթութիւն և գոհունակութիւն մը՝ միացած համերայնութեան ոգւոյ հետ, նկարուած էր ամեն դէմքերու վրայ:

Արգարե ի՞նչ կայ վսեմ ու բարի քան այն՝ երբ մարդ էակը իր նմաններուն օգնութեան ձեռն կարկառելու, լքեալ ու անպաշտպան որբերէն գէթ մի քանի հատը՝ ապագային անոնց կորստեան սպառնացող վտանգներէն ազատելու նախաձեռնութիւնը կ'ունենայ թեթև զոհողութիւններով. և ո՞ր սիրտը ուժգնագէտ չ'ըբարխէր ու փափաքով մը մասնակցել չ'ուզեր այսպիսի նուիրական ձեռնարկներու:

Վասպուրականի Որբանամին Գործադիր Վարչութեան մատուցած համարատուութիւնը, յայտնի էր թէ՛ ներկայ եղողներուն գոհունակութեան արժանացած էր և հոն գանուակներէն ոմանք, որ դեռ մինչև այդ օրը անդամակցած չէին ընկերութեան, անոր յառաջդիմութիւնը տեսնելով և օգտակար լինելուն համոզուած՝ անգամ նշանակուեցան, որով ընկերութեան անգամայն թիւը հարիւրէ աւելի բարձրացաւ. թիւ մը՝ որ անպատճառ չ'պիտի ըլլայ ըսել, բազում մամբ շատ աւելի էր, ասկէ քանի մը շաբաթներ առաջ ազգային Երեսփոխաններն ընտրելու իրաւունք ստացողներու քանակէն և պատճառ մը չ'ունինք չ'ընդունելու թէ՛ Երկրպետի կամ մանաւանդ Գահիրէի մէջ բաւական թուով հայեր կը գտնուին ի հարկին ազգին ու անոր զաւակներուն համար զոհողութիւններ ընելու պատրաստ:

Քաջաբեր նք ուրեմն որբանամներն, և եթէ Գահիրէի Ազգ. Առաջնորդարանը չ'ուզեր ընդունիլ զմեզ իբր հայ ազգին ազնիւ մասերը, մենք առանց վհատելու՝ մեր բարի գործերով և բարեգործական հաստատութիւններով ցոյց տանք թէ՛ գոյութիւն ունինք և պիտի ունենանք:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Տիար Ե. Տիկին Առաքել Մ. Պէրպէրեան «Արշալոյս» ի միջոցաւ իրենց խորին շնորհակալիքը յայտնել կը փութան, չ'կրնալով առանձին առանձին պատասխանել այն ամեն ցաւակցական արտայայտութեանց, որոնք բարեկամներու կողմէ այցելութեամբ, նամակաւ եւ հեռագրով տեղի ունեցան, իրենց սիրասուն զաւակին վաղամտեկին:

ՆՈՒՊԱՐ Ա. Մ. ՊԷՐՊԵՐԵԱՆԻ

մահուան եւ յուղարկաւ որութեան տխուր հանդիսին առթիւ, որ տեղի ունեցաւ կրկուշաբթի 12 Փետրուար:

«Արշալոյս» ի խմբագրութիւնը քաջ ըմբռնելով Տիար Ե. Տիկին Ա. Մ. Պէրպէրեանի կորուստին ծանրութիւնը եւ մեծութիւնը, այս ամենատխուր պարագային մէջ, երկնային միջիթարութիւն կը հայցէ որդեկորոյս եւ տարաբաղ ծնողաց, որք այս իններորդ եւ մէկ հատիկ զաւակը ըլլալը, հողին յանձնելու մեծ դժբաղդութիւնը կ'ունենան:

ՍՈՍԿԱԼԻ ԳՈՂԱԹԻՒՆ ՄԸ

ՄԻՔՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԳՈՐԾԱՐԱՆԻՆ ՄԷՋ

«Լաւ ուրեմն, բարեկամս, ձեզի դասական հիւսուածաբանութեան հասարակ պատրաստութիւնէն աւելի լաւ բան մը պիտի ցուցնեմ», ըսաւ Տօրթէօն Թու, կամացուկ մը մանր թիթեղ մը մտցունելով մանրագէտի գիտարանին տակը: «Նաւասիկ հետախտի համբաւաւոր պատիւ մը:

Այցելուն, շատ տոգոյն, աչքին մէկը կ'պցուց գործիքին, յայտնի էր որ այս տեսակ զննութեանց վարժ մէկը չէր, որովհետեւ թեթևօրէն գողողող ձեռքով մը պատրաստուեցաւ գոցել պարպ աչքին արտեւանունքը:

— Գրեթէ բան մը չեմ կրնար կոր որոշել, ըսաւ նա:

— Անանկ է նէ, պատասխանեց սօքթէօնը, մանրագէտը ձեռք ձեր աչքին համեմատ չէ, այնչափ ակնային տարբերութիւններ կան զանազան զննողներու մէջ ո՞ր: Սակայն եթէ պտուտակը քիչ մը ալ կամ ձախ դարձնէք յստակօրէն կըրնաք որոշել:

— Հիմա շատ լաւ կը տեսնեմ կոր, գոչեց յանկարծ այցելուն, մէկ երկու փորձէ ետք: Սակայն այս պատրաստութեան մէջ տեսնալիք մեծ բան մը չկայ, կարծեմ մէկ քանի կէտեր, քանի մը հատ տարբեր կերպով գունաւորուած նրբաթելներ կը տեսնեմ, եւ դուք կ'ըսէիք թէ այս տրպագոյն փորթիկ բաները, ա. աննշմարելի հիւլէները, կրնան բազմաճառ այն աստիճան որ կարող ըլլան քանի մը շաբաթուան մէջ Փարիզի պէս անազին քաղաք մը աւերել, չիտակը չեմ հաւատար:

Այս ըսելով ելաւ, փափկութեամբ մը նուրբ թիթեղը քաշեց հանեց գիտարանին տակէն եւ պատուհանին առջեւը երթալով սկսաւ թափանձ-

կուսակցութեան զինուորական «Ո՛հ, հիմա բան մը չեմ տեսներ» աւելցուցաւ Պահ մը վարանած երեւցաւ, մտատանջ նայուածքը չորս կողմը պտտուցաւ եւ ըսաւ «Եւ այս բոլոր փոքրիկ պատիւները ողջ են անանկ չէ՞, եւ սոսկալի կերպով մահաբեր են:

—Ո՛հ, ըսաւ սօքրէտը, այս պատրաստութիւնը գունաւորուած է՝ ուսումը դիւրացնելու համար, հոտ պատիւները մեռած են. պիտի մաշկէի որ կարենայինք այդչափ դիւրութեամբ ջրն ջրէլ բոլոր այս տեսակները որք երկրագունտիս վրայ տարածուած են:

Այցելուն յուսովբէպ երեւցաւ, իր սօքոյն գէմը կարմրեցաւ վաղանցուկ պոյնով մը բըռնալքութիկ կերպով ժպտեցաւ եւ անձկութեամբ մը աչքերը սօքրէտին աչքերուն մէջ յայտնուեցաւ. «Կ'երեւակայեմ թէ չպիտի ուզէիք ձեր քովը պահել այդչափ ահալի ժահրաւորութեանց կարող արարածներ:

—Այդտեղ կը սխալի, «ասանց ասոր ի՞նչպէս կրնայինք մեր խուզարկութիւնները չարունակել, «պատասխանեց սօքրէտը, եւ տարրադարձարարին մէջտեղէն անցնելով մօտեցաւ մեծ սուփի մը որ լեփ լեցուն էր խնամով խցուած եւ թուագրուած ապակեայ խողովակներով, մեծ զգուշութեամբ հատ մը առաւ եւ այցելունին ցուցնելով ըսաւ. «Ահաւասիկ ողջ եւ սոսկալի կերպով վտանգաւոր բաժնու մը, հնատխոր շիշի մէջ» աւելցուց ժպտով մը:

Գունակութեան տպագրութիւն մը երեւցաւ. յանկարծ սօքոյն մարդուն գէմին վրայ, աչքը սնկած անյազարար խողովակը կը դիտէր: Այս առատ եկած էր նա սօքրէտ Ռուի մէկ հին բարեկամին յանձնարարագրովը եւ սօքրէտը զինքը ընդունած էր, այն անկեղծ բարութեամբ որ կը վերապահէ ամէն անոնց, որոնք իրեն կը դիմեն. ասկից զատ այս նորեկ այցելուն զինքը կը հետաքրքրէր. երիտասարդ մարդ մըն էր, երկար, ողորկ սեւ մազերով որք վերարկուին օձիքին վրայ կ'իջնային, մոխրագոյն աչքերը սուրին անդին փայլեր կ'արձակէին, ձեռքերը տեղ մը չէին կենար, արտաւոր ջղագրգռութիւն մը կը յայտնուէր իր ամենաթեթեւ շարժումներէն եւ խօսքէն:

Յանկարծօրէն սօքրէտին ձեռքէն ապակեայ խողովակը առաւ, գրեթէ ձեռքէն խլկեց եւ ըսաւ. «Կ'ըսէք թէ հնախտի սոսկալի պատիւը ասոր մէջ ողջ ողջ բանտարկուած է, այս փոքրիկ միջոցին մէջ, երբ մարդ կը մտածէ թէ մէկը կրնայ այս դիւրարեկ ապակին կոտրել, Բարիզի ջրչեղի-ներէն մէկուն մէջ, եւ այս այնչափ աննշմարելի փոքրիկ արարածներուն, որոնք մանրագէտով տեսնելու համար պէտք է գունաւորել՝ ըսել. «Գացէ՛ք անցեցէ՛ք եւ բազմացեցէ՛ք, լեցուցեցէ՛ք մայրա աղաքի ջուր հայթայթող խողովակները, տարածեցեցէ՛ք ամէն կողմ խորհրդաւոր եւ ցաւերով ու անձկութեամբ լեցուն մահը. խլկեցէ՛ք սիրահարը իր սիրուհիէն, ամուսինը իր քնտանիքէն, զաւակը իր մօրմէն, փառասէրը իր երազներէն, գործաւորը իր շարժարաններէն Սահեցէ՛ք ամենաբարակ խողովակներուն մէջ, սողացեցէ՛ք փողոցներու երկայնքը, մահլեցեցէ՛ք սուռներու ամէն յարկերը. խորասուզուեցեցէ՛ք բոլոր ջրհորներուն մէջ, օդուտ քաղեցեցէ՛ք հանքային ջուրը խարդախողներուն ցոյց տուած կեղծ ապահովութենէն, սպասեցեցէ՛ք անշարժ սառիկ ստերուն մէջ, ձեր աւերը գործելու վայրկեանը խաղացե՛ք ջուրերուն մէջ, պատժեցեցէ՛ք այն անխոհեմները որք կը մոռնան իրենց սպառած ըմպելիքը եռացնել, թափեցեցէ՛ք մահը հասարակաց աղբուրներուն մէջ, գետնի փոշիներուն մէջ մահք եւ վերստին երեւցեցէ՛ք աւելի ժահրալից ամէն կողմ տարածելով մահը: Այո՛, այո՛, այս փոքրիկ ապակեայ խողովակը եթէ կոտրուի մայրաքաղաքիս ջրչեղիներէն մէկուն մէջ, ո՛հ իսկոյն մահն է որ ամենասոսկալի արագութեամբ պիտի տասնորդէ եւ դիակներով պիտի լեցնէ մեծ քաղաքը, ո՛հ, ի՞նչ սոսկալի եւ մեծաշուք երազ»:

Մարդու կը քիչ մը կանգ առաւ, իր յափշտակութիւնը կտոր մը նուաղեցաւ. բայց ընդհուպ նորէն պտտուցաւ իր բոցալուտ աչքերը տարրագործարարին չորս կողմը եւ աւելցուց «Իրաւ որ առ անիշխանակաները ապուշներ են: Կոյ տընմարներ են, ի՞նչ հարկ կայ ուսման գործածել էլք բնութիւնը իրենց տրամագրութեան տակ կը գնէ այսպէս գործիներ, չէ՞ք կարծեր սօքրէտը...»

Հոս գուրը դարձուեցաւ եւ ծառայ մը ներս մտնելով ըսաւ. «Տիկինը գուրսելուէնդ առաջ կը փախարի քիչ մը ձեզի հետ տեսակցելու» Տօքրէտը ներդուրթիւն խնդրելով գորսու ելաւ:

Երբոր երկու վայրկեան հոքը վերադարձաւ, տեսաւ որ իր տարրինակ այցելուն ժամացոյցը կը նայէր «Ո՛հ, ներեցե՛ք ինձի, ըսաւ, չէի մտածեր այնչափ երկար տանն ինչպէս, ձեր քովը վայրկեանները ի՞նչ շուտ կը սահին, ժամը սասնը մէկը քառորդ անցած է եւ ես տանըմէկուկէսին Բուրիզի միւս ծայրը մ'օճմագիծի մօտ ժամագրութիւն ունիմ:

Տօքրէտ Ռու մինչեւ գուրը ընկերակցեցաւ, վերջին անգամ մըն ալ այցելունին շնորհակալութիւնները ընդունեց, ձեռքը թօթուեց եւ մահնէն յետոյ իր տարրագործարար դարձաւ ինքնիրենը հարցնելով թէ ո՞վ կրնար ըլլալ այս տարրինակ անձը, «Սենդ մը, խանդարորոք մը, արուեստով յեղափոխական մը, իրաւ որ առաջին հանդիպելուս զինքը յանձնարարող բարեկամիս պիտի հարցնեմ ինչ տեսակ մարդ ըլլալը» եւ աշխատութեան սեղանին մօտենալով աւելցուց «Ախտաւոր բան մը կար վրան, ի՞նչ աչքով կը դիտէր կոր խողովակը. ի՞նչ տարօրէն ճարտասանական ճոռմաբանութիւն:

Յանկարծ յայլակի մը նման կասկած մը անցաւ մտքէն, աչքերը սեղանին վրայ պտտուցուց, շտապաւ տարափոխիկ բաժնուները պարունակող դարակը վազեց, խողովակը հոն չէր. անձկութեամբ գրպան կը խուզարկեց, ծոցեցաւ գետնի փոշիներէն համար, ներքնասնեակ վազեց կասկածելով որ մի գուցէ սխալմամբ հոն դրած ըլլայ, ոչի՛նչ, խողովակը չ'կար:

—Ժա՛ն, ժա՛ն սկսաւ պոռալ իր կնոջը սենեակը տանող սանդուխտին վարէն:

—Ի՞նչ կայ, Աստուած իմ, հարցուց չիտթած կինը, արագօրէն սանդուխտներէն վար ի՞նչալով:

—Արեւօք քեզի հետ խօսած ատենս ձեռքս բան մը կար, խողովակի պէս բան մը:

—Ո՛չ, ատենկ բան մը չ'կար, ի՞նչ կայ որ:

—Ո՛հ, թշուառականը, գոռաց սօքրէտը, զայն ինչ գողնալու համար եկած էր, եւ ամենէն վտանգաւոր բաժնուս աչք ունէր, ո՛հ կը հասկընամ հիմա իր բորբոքեալ խօսքերը, ամենավտանգաւոր տեսակէն անիշխանական մըն է եղբր, կատարեալ բանդագուշող մը որ կրնայ հասարակաց պատուհաս մը ըլլալ, ո՛հ աւազակը. հիմա ի՞նչպէս պիտի վերակազմեմ եթէ չկարենամ գոնէ ընձիւղները առնել, շնորհիւ այս ապիրատին ամիսներու աշխատանքս պարասը ելաւ, ո՛հ ա՛լ չեմ կրնար համբերել:

Յեղակարծօրէն սօքրէտը գուրը բացաւ, չորս չորս իջաւ սանդուխտները եւ վազելով դռնէն դուրս ելաւ: Տիկին Ռու յուզուած պատշգամ նետուեցաւ եւ տեսաւ հեռուն փողոցի ծայրը նիհար եւ տվոյն մարդու մը կառք նստիլը եւ կառքին սրաքաւ ընթանալը, մինչդեռ իր ամուսինը դուրսը բացը, հողաթափներով եւ տարրագործարանի գողնոցով՝ կատաղի եւ յուսահատ աղաղակներ կը բանտար կառքը վեցնել տալու համար եւ կամ՝ ոստիկանի մը ուշադրութիւնը հրաւիրելու համար, բայց զժամադարար այն պահուն ոստիկան չ'կար փողոցին մէջ:

(Մտացեալը յաջորդով) Տր. Տէ Պիւտիէն Թարգմ. ԼԵՒՈՆ

ԵՐԱՆՈՒ ԴԱՇՆԱԿ

(Օգտագիտել)

Գերմանական ամենայարգի գործարաններու մէկէն ելած, լեռ ե ընձիւղ գաղչակ մը կը վաճառուի արժան գնով:

Չայն ունենալու փախաբող, ու գնի եւ այլնի մասին պէտք եղած տեղեկութիւնները ստանալ ուզողները՝ կրնան դիմել «Արշալույս» ի խմբագրութեան:

ՅԱՆԱԿՑՈՒԹԻՒՆ

Առ Տ. Առաքել Պերպերեան

Գիտերու եղբրք, անտաներու խոր, Թաւուսներու մէջ, ծովերու վրայ, Հողիս սաւառնած կը շրջի մոլոր, Բու կալաւած, անբոյժ վէրքերը կողբայ. Ու՛ արեւած բնութեան մուսաներուն լուր՝ Վերախաւարուն երազէ երկիրը, Իրենց քնարներուն թիւով բերկրաւթ՝ Լարել կ'աղբարէ քնարս տիրաւոր, Երգել վշտիդ ամբողջով, Սրբել արցունքդ անհասնում:

Գուն դժբաղդ ես բայց, տե՛ս, անոնք ահա Ուրեք փոթորիկ մէջ կան փոթորկած, Ուրեք՝ մեզի պէս փուշերու վրայ, Կ'եղերերգեն ցաւն իրենց անմոռաց, Ուրեք՝ պերճանքի հանդիսատես յար, Իրենց պերճանքներն ունին երգելու, Չեն մօտիք մեզի, կը փախին հեռու, Հեռու՛ մեր ցաւէն, վշտէն՝ զողահար. Իսկ քնարիս ձայնն է լսի Թախիծ, լաց, խոց ու սրմոք:

Ես կը փշրեմ այն ու կը մոռնամ իս, Կուգամ քեզի մօտ, ձեռքըդ կը թօթուեմ, Կ'ըսեմ. — Եթէ հոս գուն յոյս մը չունիս, Ունիս եթէ սոսկ հոս չարք մը ցորտ վէ՛մ. Հոն նայէ՛, հո՛, վեր. աստղերէն անդին, Կեանքիդ ճրագներն հոն կը վառին անչէլ, Ձեռքիդ քնարներն ինչպէս փառքի մէջ, Անոնք անկէ հոս քեզի կը ժպտին, Տե՛ս, սփոփուէ՛ ու ասիկ Գուն ալ անոնց միշտ ժպտէ՛:

Գահիրէ 13 Փետ 1900 ՀՄԱՅՅԱԿ ՇԱՔՐԵԱՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԻՏԱԼԻԱ

Ինֆլուէնցան մտահոգութիւն պատճառելու աստիճան կը յաւաքանայ Իտալիոյ մէջ, 30,000 հոգի կը հաշուուի բնութեղ միայն Հոռոմի մէջ: Պայքը հրամայեր է մահու տար աղօթքներ կատարել:

ԱՄԵՐԻԿԱ

Նիւ Եօքթի Ռեյդը լրագիրը Ուաշինկթընէ հեռագիր մը կը հրատարակէ, որուն մէջ կ'ըսէ թէ՛ Աւստրիոյ դեսպանին կինը — Նախագահին կողմանէ սպիտակ-տան մէջ դեսպանական մարմնոյն սրուած ճաշին — մերժել է Մեքսիկոյի դեսպանին թեքը, երբ այս վերջինը եկած էր զինքը սեղան հրաւիրելու: Այս դեսպանը ժամանակաւ դատախազ էր այն դատարանին որ Մեքսիկոյի կայսրը դատապարտեց հրացանի բռնելու: Կը կարծուի թէ այս միջադէպին պատճառաւ Աւստրիական դեսպանը փոխուի:

— Ֆէմինիզմ.

Արդէն Բարիզի մէջ լրագիր մը կայ՝ որուն խմբագրութիւնը եւ վարչութիւնը միմիայն կ'ընտրուի կը կատարեն:

Վերջերս Միացեալ Նահանգաց մէջ կ'ընտրէ երկաթուղոյ ընկերութիւն մը կազմուած է. ընկերութիւնը այս պահուս կը ձեռնարկէ Սիօքրէտէն գէլպի Սան Ֆրանչիսքոյի արևելեան կողմը շինուելիք երկաթուղոյ գծին: Ընկերութեան բաժնետէրերը միմիայն իգական սեռէ են: Վարչական ինչպէս նաև շահագործման ժողովները կ'ընտրէ կազմուած են. պաշտօնէտիկան մեծ մասը կանանց պիտի վերապահուի:

Չի գիտցուի թէ էրիկ մարդիկ այս ընկերութեան մէջ տեղ պիտի գտնեն գէթ իբրև ճամբորդ:

ՉԻՆԱՍՏԱՆ

Գերմանական թերթեր Շանհայէ եկած հեռագիրներ կը հրատարակեն, որոնց մէջ կ'ըսեն թէ՛ Բոր-Արթուրի և Մանչուրիի մէջ ժողովուրդը ռուս զինուորք պատրաստ են ոյժ տալու կառավարութեան նոր ձևին:

Պրանսացի նաւազք ցամաք ելած են և Բէքինի վերայ կը քայլեն եղեր:

Անգլիական գետպանատունը յանկարծակիի եկեր է արքայական փոփոխութենէն: Ընդհակառակը ռուս և ֆրանսական դեսպանատանց իմաց արուած և նոյն իսկ անոնց խորհուրդը առնուած է եղեր: Չինաստան գտնուող անգլիացիք սա համազումը ունին թէ՛ արքայական փոփոխումը պիտի զօրացունէ Ռուսիոյ ազդեցութիւնը Չինաստանի մէջ:

Անգլիացիք կոչում կ'ընեն Միացեալ Նահանգաց և Ճաբոնի՝ նիզակակցութիւն մը կազմելու համար ընդգէմ այս նոր վարչական ձևին, զոր բնաւ չեն ուզեր և ոչ մէկ դնով: Անգլիացիք կը հաւատեն թէ պետական հարուածը լարուած է Պրանսայի և Ռուսիոյ կողմանէ:

ԱՆԿԼԻԱ

Տեյլի Թեյեկրաճի Բորգամաութհի թըղթակցին ըսածին նայելով, նաւային չըջանակաց մէջ կը հաւատան եղեր թէ՛ Թագուհոյն կառավարութիւնը շարժման մէջ պիտի գնէ պահեստի նաւատորմիդը:

Մանչի նաւախումբը, փոխանակ ճիպւրաթար խրկուելու, Բրիտանական ջուրց մէջ վար գրուելը, կառավարութեան կարեւոր միջոցներ ձևք առնելուն մէկ նշանը կրնայ համարուիլ:

Լորտ Չարլըս Պրէսֆորտ փետրվար 1ին Լոնտոնէ մեկնեցաւ, Տուր-Քալէի ճամբով, իւր Միջերկրականի նաւախումբին հրամանատարութեան պաշտօնին գլուխը անցնելու համար:

ԹՈՒՐԿԻԱ

Կառնուրց մը Վոսիտրի վրայ

Գերմանք յանդուգն ծրագիր մը յղացան. հսկայ կամուրջ մը Վոսիտրի երկու ափերը պիտի միացնէ, և այսպէսով Պեռլինէ մեկնող ճամբորդները պիտի կարենան ուղղակի Պաղատտ հասնիլ առանց երկաթուղիէն դուրս սաք կոխելու: Գերմանական կառավարութիւնը քաղաքային և զինուորական երկրաչափներէ բաղկացեալ մասնաւոր

յանձնաժողով մը կազմեց Պեռլինի մէջ, որ ժամանակին պահանջմանց համապատասխանող ծրագիր մը պիտի պատրաստէ:

Մրազրին պատրաստութեան ժամանակ յանձնաժողովը աչքի առաջ պիտի ունենայ Արևելքի մէջ վերջին տարիները Գերմանական շահույ ստացած ընդարձակումը:

Նոր կամուրջին մէջտեղը այնքան բարձր պիտի լինի որ՝ ամենէն բարձր կայմ ունեցող նաւերը տակէն պիտի կարենան անցնիլ: Եւրոպիոյ և Ասիոյ մէջ ուղղակի յարաբերութեանց տեսակէտով, Վոսիտրի վերայի այս կամուրջը քանակաւ գարուն սկզբնաւորութեան ամենէն կարեւոր դէպքը պիտի լինի:

ԹՐԱՆՍԻԱ

Զօրավար Պուլլըրի շարժմանցը մասին կատարեալ անստուգութիւն մը կը տիրէ Լոնտոնի մէջ. ոչ ոք գիտէ թէ ինչ կ'ընէ զօրավարը: Զօրավար Ֆրէնչ՝ Գաբ վերագարձաւ և շատ հաւանական է որ Լորտ Քիչնէրի և Լորտ Բոպըրգսի հետ համախորհուրդ, լուրջ յառաջ խաղացման մը ձեռնարկէ:

— Թայլոզ կ'ըսէ թէ՛ ածուխին գինը երթալով բարձրանալու վերայ է: Գարտիֆի տունը կալլէսի մէջ 500,000 թոնո գնեց, որուն 400,000ը օտար երկիր պիտի ղրկուի: «Ցամաքային երկիրները» են ածուխի այս գնորդները:

— Գէյթթաունէ կը գրեն կազէք Տը Ֆրանկֆորթի թէ Անգլիայէ եկած ձիերուն և չորիներուն մէջ համաճարակ ծագեր է: Հիւանդ ձիերէն ազատելու համար 5է 20 շիլինի կը ծախեն եղեր:

ՅՐԱՆՍԱ

— Օր. Ֆէրնանտ Բիթօ, 22 տարեկան մանկամարդ աղջիկ մը, Մարսէյի ճիպրնթացով ճամբայ կ'ենէ Լիօն իւր մօր քով վերագառնալու համար: Երկրորդ կարգի վակօնի մը մէջ առանձին կը գտնուի 23 տարեկան երիտասարդի մը հետ, Մորիս Մէրլ անուամբ, որ Բարիզ-Լիօնի երկաթուղոյ ընկերութեանը մէջ գրագիր է: Մէրլ, մանկամարդ աղջկան անհամ կատակներ ընելէ վերջ, կ'ուզէ լլկել զանի: Կոխմ'է կ'սկսի: Մէրլ, տեսնելով որ իւր փորձերը ի դերե կ'ելլեն՝ կը կատարի և միւս կողմանէ վախնալով որ իւր զսին արձակած աղաղակները մի գուցէ դուրսէն լսուին, կ'սպառնայ սպաննել զանի և կ'սկսի խեղդելու փորձեր ընել:

Բարեբաղդաբար այդ միջոցին երկաթուղին Թարաքօնի կայարանը կը հասնի: Պաշտօնեայք, աղջկան աղաղակները իմանալով, դուրս կը բանան և կ'ազատեն աղջիկը և կը ձերբակալեն երիտասարդը:

— Շուներու համար գերեզմանատուն.

Վերջերս Բարիզի մէջ ընկերութիւն մը կազմուած է, նպատակ ունենալով « շանց և ուրիշ ընտանի կենդանեաց գերեզմանատուն մը » հաստատել:

Այս գերեզմանատան դադափարը յղացողները են, Ֆրօնիս ի տեսչուհին Տիկին Մարկէրիթ Տիւրան և ալօֆայ ի տնօրէնը Պ. Ժօրժ Բարմուս:

Ընկերութեան կանոնագիրը շահեկանութենէ զուրկ չ'է. 4րդ յօդուածին մէջ կ'ըսէ՝ ընկերութեան նպատակն է « ապահովել անկիւն մը՝ հաւատարիմ և անձնուէր կենդանեաց մարմնոյն »:

Այն տէրերը որք չ'են ուզեր իրենց կենդանին թաղել, ատոնց համար դիակիզարան մը պիտի հաստատուի, նոյնպէս գերեզմանատան մէջ պիտի գտնուի ընտանի կենդանեաց թանգարան մը:

Ընկերութիւնը վերջնականապէս կազմուած է և ունի իբրև գրամագլուխ 350,000 ֆրանք:

ՌՍԻԱ

Թայլոզ ի Թեհրանի թղթակիցը կ'իմանայ թէ՛ Պարսկաստան կարգ մը շնորհումներ պիտի ընէ Ռուսիոյ, որովհետև այս վերջինը հաւանած է եղեր Պարսիկ կառավարութեան փոխատուութիւն մը ընել: Պարսկաստանի կեդրոնին և հիւսիսի ճամբաները և երկաթուղոյ մենաշնորհները Ռուսիա պիտի ստանայ, կ'ըսէ թղթակիցը. հաւանականաբար պիտի թոյլատրուի իրեն նաև Աէիսթոնէն զօրքեր անցնելու:

Անգլիական նոյն թերթին թղթակիցը կը յաւելու թէ՛ Պաքուէն Եւրոպա քաջուած հեռագիրք առ ժամանակ մը կասեցուցուած են. որովհետև Ռուսիա զօրագունգերու մեծ շարժումներ կը կատարէ դէպ ի Աֆղանիստանի սահմանազուխը:

Ա. Զ. Դ

Բարեկամ մը որ տեղէս մեկնելու պատրաստուած է, վաճառելու առաջարկուած թեալ մեզ զրկած է ՆՈՐ ՅԵՄԱՆԻՔԻ առաջին երկու տարիներու անթերի հաւաքածոն:

Անոնք որ գնելու փափաքը ունին, թող դիմեն « Արշալոյս » ի լսմբագրութեան:

ԼԱ ՄԻՉՈՒՄԱԼ ԼԱՅՅ

ԿԵՆԱՅ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԱՃԵԱՐՅԻ ԱՍԵՆԵՆ ՀԱՐՈՒՍՏԸ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ

ԵՐԱՇԵԱՒՈՐԵԱԼ ԳՐԱՄԱԳԼՈՒԻՒ ՄԻԼԻԱՐ 437 ՄԻԼԻՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահաբաժինները:
Ապահովագրեալներուն արդէն յճարած է կամի նպաստ իրենց գումարած է 3 ՄԻԼԻՈՐ 480 ՄԻԼԻՈՆ որ գրեթէ աշխարհի ուրիշ որ և է ընկերութենէ մէկ միլիար աւելի է:
Ս. ԼԵՌՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ ի Գահիրէ:

Աշխարհի մէջ գտնուող ուրիշ որ և է ընկերութենէ աւելի երաշխաւորութիւններ, ընդարձակ գործաւնութիւններ և հրապարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրին կը գանձէ:
ԱԼԷՔՍԻՍ ԼԱՎԻՉՈՆ զլիաւոր գործ. յ'Ազգ. քսանգրիա.

